

ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՑՆՑԵԼ

Նախաճաշի համար արտասովոր լռություն էր սրահում: Այնպիսի մի լռություն, որ, երբ լսեցի մանկան կամացուկ մի ձայն՝ «պապիկ», շրջվեցի անմիջապես ու ականա արձագանքեցի՝ «Հա ջա՛ն»: Հազիվ երկու տարեկան մի տղա էր՝ շեկլիկ մազերով ու խոշոր, խաժ աչքերով: Ծնկների վրա, նապաստակավարի նստած էր աթոռին, ձեռք չտված ավսեի առջեւ ու նայում էր ինձ:

- Պապիկ, - նորից մրմնջաց նա:

- Ի՞նչ է, բալիկ ջան, - հարցրեցի ես՝ վերջնականապես համոզվելով, որ նա ինձ է դիմում:

Բայց նա երեւի միայն այդքանը գիտեր, կամ միայն այդքանն էր ուզում ասել:

- Պապիկ...

Երեխայի կողքին նստած մանկամարդ կինը ժպտաց մեղավոր.

- Ներեցեք, - ասաց նա: - Դուք իմ Նարեկի պապիկի նման եք: Շփոթեց:

- Չի շփոթել, - ասացի, - ես էլ պապիկ եմ եւ վեց թռռնիկ ունեմ:

Չկարողացա հեռանալ Նարեկից, նստեցի նրա դիմացի ազատ աթոռին:

- Նարեկ, - ասացի, - որ այստեղ նստեմ ու քեզ նայեմ՝ նախաճաշը կուտե՞ս:

Տղան ժպտաց ու գլխով արեց:

- Դե կեր, ցավդ տանեմ, կեր, չքնա՛ դ տղա...

Մայրը սկսեց կերակրել նրան ու մեկ էլ ասաց.

- Չքնա՛ դ... Դուք պետք է նրա մեծ քրոջը՝ Լուսինեին, տեսնեք: Ա՛յ, նա իսկապես չքնաղ է...

Ճիշտ այդ պահին մի աղջիկ մոտեցավ մեր սեղանին եւ նստեց Նարեկի մյուս կողքին:

- Լուսինեն այս սիրուն աղջի՞կն է, - հարցրեցի ես:

- Չէ՛, - ասաց մայրը: - Սա Աննան է, Լուսինեւ մնաց Սպիտակում, փլատակների տակ...

Լուսինեւ բոլորովին ուրիշ է, խելացի, պարտաճանաչ... Հենց իր պարտաճանաչության գոհ դարձավ: Գիտե՞ք, հիվանդ էր, ասացի՝ դպրոց մի գնա, Լուսինե ջան: Չէ՛, ասաց, մայրիկ, չեմ ուզում դասերից բացակայել: Ու գնաց:

Ես պահեցի շունչս: Ինչէ՛ր է ասում: Միտք ունի՞ հարցնել, թե որտեղ է հիմա Լուսինեն:

- Շատ կազմակերպված աղջիկ է, - նույն մեղմ ժպիտով շարունակեց մայրը, բացարձակ գերազանցիկ է, հիանալի նվագում է, արտասանում... Լավ սիրտ ունի... Ծանրոց էր պատրաստել Ղարաբաղի երեխաներին ուղարկելու համար՝ զանազան խաղալիքներ, հագուստ, գրենական պիտույքներ ու գրքեր... Հետը դպրոց տարավ... Դպրոցի փլատակների տակ գտանք այդ ծանրոցը: Գիտե՞ք, խաղալիքներին ոչինչ չէր եղել... Ու մի նամակ գտա ծանրոցի մեջ... Պահում էմ: Չգիտեմ՝ ուղարկե՞մ, թե ոչ...

Նա աթոռի թիկնակից կախված պայուսակի միջից քառածալ մի թուղթ հանեց ու տվեց ինձ.

- Տեսեք ինչ է գրում:

Ես կարդացի.

«Բարեւ, սիրելի արցախցի: Ես բնակվում եմ Հայաստանի Սպիտակ քաղաքում: Անունս Լուսինե է, ազգանունս Նազարյան: Սովորում եմ թիւ 5 դպրոցի 7-րդ դասարանում: Սովորում եմ գերազանց: Մեր դասարանը բաղկացած է 31 աշակերտներից՝ 21 աղջիկ եւ 10 տղա:

Գրեթե մեկ տարի է, ինչ մենք մտահոգվում ենք ձեր մասին, մեր արյունակից արցախցի եղբայրներ եւ քույրեր: Բոլորիս հայտնի է ձեր ճակատագրական վիճակը, ձեր երկրում՝ Լեռնային Ղարաբաղում, ստեղծված բարդ իրադրությունը: Ինչքան լավ կլինէր, եթե դուք ապրեիք մեզ հետ, Հայաստանում, սովորեիք մեզ հետ: Ախր ո՞վ չգիտե, որ ճիշտն այն է, երբ զավակը հարազատ մոր հետ է ապրում... Ո՞վ չգիտե, բայց...

Շատ հուզվեցի, երբ «Պիոներ կանչում» կարդացի Հերիեր գյուղի բնակիչ Սոնա Ադամյանի «Դու հավերժության լուսե օթեւան» հայրենասիրական բանաստեղծությունը: Ինչպիսի՜ հուզմունք ու կարոտ է արտահայտել իր բանաստեղծության մեջ:

Իմ սիրելի, իմ հարազատ արցախցիներ, շատ եմ ցանկանում մոտիկից ծանոթանալ ձեզ հետ, մանրամասն իմանալ ձեր մասին... Ի՞նչ կլինի, որ գոնե հյուր գաք Սպիտակ:

Ձեր ապագա ընկերուհի՝ Լուսինե»:

- Իսկ դպրոցական պայուսակի մեջ, - ասում է մայրը, - կա նաեւ Նոր տարվա ուրախ հանդեսի ծրագիրը, որ իմ Լուսինեն է կազմել ու բաժանել դերերը: Այդ օրն էլ փորձ ունեին... Շատ անխիղճ բան է, չէ՞, բոլորն էլ մնացին փլատակների տակ, բոլորը՝ ե՛ւ երեխաները, ե՛ւ ուսուցիչները:

Նարեկը երկու ձեռքով բռնեց գլուխը ու մրմնջաց.

- Վայ-վա՛յ, վայ-վա՛յ...

- Ի՞նչ պատահեց, տղա ջան, - անհանգստացա ես: Մայրը, ձեռքը դրեց որդու գլխին:

- Մի անհանգստացեք, - ասաց նա: - Հենց որ փլատակ եմ ասում, Նարեկս հիշում է Սպիտակը... Ախր նրա մեծ պապն ու տատն էլ մնացին քանդված շենքի տակ... Առաջին

անգամ, որ տեսավ նրանց ավերված տունը, ա՛յ, ճիշտ այդպես երկու ձեռքով բռնեց գլուխը ու ասաց. «Վայ-վայ՛ յ, տատի...»: Հիմա կանցնի, մի՛ անհանգստացեք...

Մի՛ անհանգստացեք... երբ խելագարվել կարելի է:

- Լուսինես այնքան գեղեցիկ մի շարադրություն է գրել իր մեծ տատի ու պապի մասին...

Ու ես միանգամից հասկացա, թե Նարեկի ու Աննայի մայրիկի, Անուշ Նազարյանի խոսքի մեջ ինչն է արտաստվորն ու արտառոցը: Նա չէր կարողանում անցյալ ժամանակով խոսել իր Լուսինե դստեր մասին: Նրա համար Լուսինեն կար, ապրում էր, նրա կողքին էր, նրա սրտի ու մտքի մեջ էր: Ինչ թեմայով էլ խոսակցություն բացվեր, Լուսինեի անունը հնչում էր.

- Լուսինեիս ձեռագիրն ուրիշ է:

- Շա՛տ է կարդում: Ասում եմ՝ աչքերդ կցավեն, աղջիկս...

- Սումգայիթից փախած երկու ընկերուհի ունի, ամեն օր տուն է բերում... Այլեւս չդիմացա.

- Անուշ, - ասացի ես, - բավական է, հա՞... Խնայիր Աննային ու Նարեկին: Նրանք պետք է ապրեն: Խնայիր քեզ... Ինքդ էլ վիրավոր, հազիվ ես քայլում: Մի խոսիր, մի խոսիր... հանգստացիր, հա՞, խնդրում եմ...

Անուշ Նազարյանը ինձ նայեց ներողամտորեն.

- Գուցե Ձեզ տարօրինակ թվա, բայց ես թեթեւանում եմ, երբ խոսում եմ Լուսինեիս մասին:

Այդպես ասաց: Այդքանը: Ի՞նչ պատասխան կարող ես տալ նրան: Ի՞նչ ասել: Ինչո՞վ կարող ես մխիթարել, եւ սփոփել մի մոր, որն իր Լուսինե աղջկան է կորցրել:

* * *

Իսկ իմ կողքի սեղանի մոտ նստած են Կլարան ու Լիդան: Երկվորյակներ լինեն ասես՝ այնքան նման են իրար: Բայց մեկը երեք եւ կես տարեկան է, իսկ մյուսը՝ բավականին մեծ՝ հինգ տարեկան:

Նրանք էլ կորցրել են իրենց մորը:

Հնարավոր չէ, որ այդ մատնաչափիկ աղջնակները գիտակցեն, թե ինչ է կատարվել իրենց հետ, հասկանան, որ չկա այլեւս իրենց մայրը: Ո՞վ կարող է ասել: Բայց փաստն այն է, որ նրանք այդ մասին չեն խոսում: Ոչ մի բառ: Մայրիկ չեն կանչում ու չեն հարցնում, թե որտեղ է մայրիկը: Բռնում են իրար ձեռք ու լուռ նստում մի անկյունում: Լուռ, տխուր, լուրջ: Իսկ ո՞վ չգիտե, որ չկա ավելի սարսափելի բան, քան այն, երբ երեխան լուռ է:

Դա հիանալի է հասկանում փոքրիկների հորեղբոր կինը՝ Անահիտը, որն ինքն էլ առաջին մայրությունն է ապրում: Չի թողնում, որ աղջիկները միայնակ մնան, անընդհատ նրանց հետ է: Իսկ, երբ նրանց հետ է, Կլարան ու Լիդան փոխվում են անմիջապես, երեխաներ են դառնում, ամուր կախվում են Անահիտի ձեռքերից ու ճովողում են: Ու կովում են իրար հետ, թե ով պետք է, ասենք, աջ ձեռքը բռնի, եւ հերթով փոխվում են: Քաշքշում են իրար, ծիծաղում են, իսկ, երբ ծիծաղում են աշխարհն ասես արեւով, տաքությամբ ու հույսով է լցվում: Եւ հենց նման պահերին թվում է, թե երեխաներն արդեն չեն հիշում, մոռացել են իրենց Լորետա մայրիկին:

Բայց միայն թվում է:

Ես նկարագարդ մանկական գրքեր նվիրեցի նրանց ու որոշեցի գրքերի վրա ընծայական գրել:

- Այս մեկը քեզ՝ Կլարա Առաքելյան, - ասացի,- իսկ սա էլ քեզ՝ Լիդա Առաքելյան...

Եւ հանկարծ աղջիկները ուռցրեցին շրթունքները: Ուր որ է՝ լաց կլինեն:

- Շահբազյան գրիր, պապիկ...

- Ինչո՞ւ, - զարմացա ես, - չէ՞ որ ձեր ազգանունը Առաքելյան է...

- Իսկ մեր մայրիկի ազգանունը Շահբազյան է... Մե՛րն էլ Շահբազյան գրիր, պապիկ, ի՞նչ կլինի...

Դե, եկ նստիր, լաց եղիր, պապիկ, ու մտածիր՝ նրանք մոռացե՞լ են իրենց մորը, թե՞ ձեւացնում են, որ մոռացել են: Թե՞ չեն ուզում իրենց ցավը հրապարակ հանել ու պահում են իրենց փոքրիկ սրտերի մեջ:

Դրա համար էլ երբեմն մի անկյուն են քաշվում, բռնում են իրար ձեռք ու լռում:

Այդ ահավոր լռության մասին ասաց նաեւ Արզնի առողջարանի գլխավոր բժիշկ Հենրիկ Մանուկյանը:

- Մեր առողջարանում սովորաբար երեխաներ չեն լինում: Անկեղծ կասեմ, երբ իմացա, որ մեծ աղետի վայրերից մեծահասակների հետ նաեւ երեխաներ են բերելու, անհանգստություն ապրեցի: Աղմուկ-աղաղակով կլցնեն առողջարանը, մտածեցի ես, ջարդուփշուր կանեն ինչ ունենք: Բայց անցավ մի օր՝ լռություն է, անցավ մի շաբաթ՝ լռություն է: Ու ես սարսափեցի: Ախր էլ ի՞նչ երեխա, որ չվազի, չցատկոտի, չքրքջա, չճչա... Դրա համար էլ շտապեցինք զվարճախաղեր կազմակերպել նրանց համար, երկու-երեք օրը մեկ ինքնագործ խմբեր են ելույթ ունենում մեր դահլիճում, կինոնկարներ ենք ցուցադրում... Եւ էլի կանենք այն ամենն, ինչ նրանց հաճելի է, ինչ նրանք ուզում են, միայն թե հիշելու, տխրելու ժամանակ չունենան մեր փոքրիկները, միայն թե լուռ չմնան...

Այդ դեռ երեխաները...

Իսկ ի՞նչ անես մեծերի հետ: Ի՞նչ անես, որ նրանք նույնպես հիշելու, տխրելու ժամանակ չունենան: Եւ հնարավոր է արդյոք:

Արտասահմանից հայ հյուրեր էին եկել առողջարան, արցունքկալած աչքերով աշխատեցին սփռվել աղետյալներին, գրուցեցին մեծերի հետ, գրկեցին փոքրերին: Հրաժեշտի ժամանակ նրանցից մեկը իր այցեքարտը նվիրեց Կլարայի եւ Լիդայի տատիկին՝ Կլարա Առաքելյանին.

- Վերելում գրվածը հասցես է, - ասաց նա, - շատ կխնդրեմ նամակ գրեք, որպեսզի իմանամ, թե ինչպես եք:

Եւ Կլարա Առաքելյանը ճիշտ իր թոռնիկների նման հուզված ուռցրեց շրթունքները...

- Ես էլ այցեքարտ ունեմ, - ասաց արժանապատվությամբ, - բայց, դժբախտաբար, հասցե չունեմ այլևս, որ տամ Ձեզ: Մեր շեն տունը Լենինականում հիմնահատակ կործանվեց...

Հասցե չունի նաեւ Լենինականի տրիկոտաժի ֆաբրիկայի նախկին կարող բանվորուհի Արաքսի Մեծոյանը: Հասցե չունի, երբ առաջ, մի ամբողջ հավերժություն առաջ, մինչեւ անցյալ տարվա դեկտեմբերի յոթը երկու տուն ուներ, մի սանդղահարթակի վրա բացվող երկու դուռ: Այնտեղ, հպարտ ու երջանիկ իրենց մեծ գերդաստանով, ապրում էին Արաքսին եւ քաղաքում «Քավոր Մնաց» անունով նրա ամուսինը՝ իրենց որդիների, հարսների, թոռների հետ: Ուրախ ու լի տուն էր: Տղաներն աշխատում էին գործարանում, իսկ երեկոները ամեն մեկը մի գործիք առած նվագում էր: Նվագում էին սղաները, երգում ու պարում էին հարսներն ու երեխաները, եւ թվում էր, թե ոչինչ չի կարող խաթարել աշխատավոր այդ գերդաստանի երջանկությունը: Ոչինչ:

Հին արհեստավոր Մնացականը մնում-մնում ու մեկ էլ ասում էր.

- Արագիլների նման ծղոտ-ծղոտ, շյուղ-շյուղ սարքեցինք մեր բունը, կնի՛կ... Հիմա մեր վայելելու ժամանակն է:

Իսկ մի քանի բույս անց նա չկար: Եւ թող սրբապղծություն չթվա, դա նրան բաժին տրված վերջին բախտավորությունն էր: Բարեգութ ճակատագիրը խնայեց նրան, եւ նա չտեսավ, թե ինչպես ամբողջ ընտանիքը փլատակների տակ հայտնվեց, չտեսավ, թե ինչպես գոհվեց Ներսես որդին, Մելսիդա հարսը, որ երեխայի էր սպասում, երկու թոռնիկները՝ հրեշտակներ... Չիմացավ, որ ողջ մնացածներին միայն երրորդ օրն են հանել ծածկասալերի տակից՝ վիրավոր ու ուշագնաց վիճակում:

Արաքսի Մեծոյանին նույնպես փլատակներից հանեցին ինչ-որ օտար լեզվով խոսող մարդիկ, անձանոթ, բայց շատ հասկանալի խոսքերով համոզելով չշարժվել, հանգիստ մնալ, մինչեւ որ գողիչներով կտրեն, հեռացնեն մարմնին ընկած ծածկասալը... Եւ հետո էլ՝ ով տեսնում էր նրան, համոզում էր հանգիստ պահել իրեն, համբերել, դիմանալ, ապրել, արցունք չթափել՝ հանուն մնացածների...

Եւ Արաքսի Մեծոյանը փորձում է ապրել: Այդքանը: Իսկ արցունքների դեմ ոչինչ անել չի կարողանում: Չէր կարողանում նույնիսկ թաքուն լաց լինել: Պապի անունը պահող փոքրիկ Մնացականը հալածում է նրան: Հենց տեսնում է, որ լաց է լինում տատը, քաշում է փեշից.

- Տասի, հըբը դու էրթում չկերա՞ր, որ էլ լաց չես եղնի...

Ես չգիտեմ, առողջարանի անձնակազմը ե՞ս երդվել էր լաց չլինել, թե չէ, բայց մարդիկ արցունքները թաքցնել չէին կարողանում:

- Միրտս կտրատվում է, ո՞ր սեղանին մոտենում եմ՝ մի քանդված տուն է, - մղկտում էր ազգությամբ ասորի մատուցողուհին: - Դե ոնց դիմանաս, տեսեք, պապն է պահում իր երկու փոքրիկ թոռնիկներին Բա... բա Աստված կա՞... Բա դա պապի՞ գործ է, տղամարդո՞ւ գործ է:

Նրա մատնացույց արած սեղանի մոտ նստած է սպիտակցի Վոլոդյա Գրիգորյանը: Կինը գոհվել է երկրաշարժից, թոռնիկը քանդված, վառվող տանն է մնացել, փրկել են մի կերպ եւ հինգերորդ երեխային սպասող հարսի հետ ուղարկվել Ամերիկա՝ բուժվելու: Թոռնիկներից մեկին Երեւանում քեռին է պահում, երկուսին էլ պապը՝ Արզնիում... Բարեբախտաբար շատ ազնիվ, շատ հոգատար աշխատողների օգնությամբ:

Նրանք պարտականություն չեն կատարում: Այն, ինչ աղետյալների համար անում են առողջարանի աշխատողները՝ գլխավոր բժշկից եւ բժիշկներից սկսած մինչեւ քույրերը, մայրապետներն ու խոհանոցի աշխատողները, անհնարին է անել աշխատավարձով կամ պարգևատրությամբ: Դա միայն բարի հոգով ու սրտով կարելի է անել: Եւ ներողամտությամբ ու անձնվիրաբար, ինչպես հարազատ ընտանիքիդ համար ես անում: Թեեւ այստեղ քիչ ավելի բարդ է: Երբ երեխադ կամակորություն է անում կամ չափից ավելի քմահաճ է, կարող ես բարձրացնել ձայնդ եւ մանկավարժական օրենքների վրա ձեռք թափ տալով, նույնիսկ ականջը բռնել: Իսկ այստեղ ոչ ձայնդ կբարձրանա, ոչ էլ առավել եւս՝ ձեռքդ... Քո զենքը միայն խնդրելն ու համոզելն է.

- Կե՛ր, բալիկ ջան...

- Ուրիշ ի՞նչ ես ուզում...

- Կուզե՞ս հեքիաթ պատմեմ քեզ համար:

- Մայրիկ, Ձեզ պետք է քաղաք գնալ: Երեխաներին թողեք ինձ մոտ՝ ես կհետեւեմ:

Իսկ նրա՛նք ինչ են անում, նրանք՝ ճակատագրի անմիտ ու դաժան հարվածով հարազատ մարդկանցից, հարազատ շրջապատից ու հարազատ վայրերից միանգամից զրկված մարդիկ: Չարացե՞լ են, դառնացե՞լ, աշխարհն այլեւս համատարած սե՛ւ է նրանց աչքին, ոչ ոքի եւ ոչնչի այլեւս չե՛ն հավատում: Չէ, չէ՛, այդպես չէ: Նույնիսկ հակառակը: Եթե միայն տեսնեք, թե ինչ հոգածությամբ եւ ուշադրությամբ են հետեւում միմյանց, ինչպես են իրար հետ կիսում իրենց վիշտն ու նաեւ ստացած ծանրոցներն ու մրգերը՝ մոռանալով իրենց, առանց մազաչափ իսկ ափսոսալու, ինչպես պատերազմի ժամանակ...

Բայց ախր ինչո՞ւ այդ գնով: Ինչո՞ւ պետք է կորցնենք, որպեսզի գտնենք, կամ ավելի ճիշտ՝ վերագտնենք այն, ինչ ունեցել ենք, ինչ մերն է եղել՝ մարդկային կարեկցանքն ու գթասրտությունը: Պատահականությունն էր, որ մեծ ողբերգություն ապրող հայ ժողովրդի կողքին անմիջապես հայտնվեցին ռուսը, վրացին, ուկրաինացին, դազախը, մեր երկրի բոլոր ազգերը: Պատահականությունն էր, որ աշխարհի բոլոր ժողովուրդները, նույնիսկ նրանք, որ

իրենք օգնության խիստ կարիք ունեն, հայ ժողովրդին տվեցին ոչ միայն իրենց հանգանակած միջոցները, այլև արյունը, իրենց սիրտն աշխատեցնող արյունը:

Ո՛չ: Ոչ մի պատահականություն չկար: Մեզ հասած ցավն ու արհավիրքն այնքան մեծ էին եւ այնքան ուժգին էր երկրաշարժը, որ ցնցեց ոչ միայն մեզ, այլև ամբողջ աշխարհը: Եւ աշխարհի բոլոր ծայրերում մարդիկ միանգամից հասկացան, որ ախր իսկապես շատ փոքրիկ է երկրագունդը: Որ ինչ կատարվում է որեւէ անկյունում, վերաբերում է բոլորին: Եւ օգնության ձեռք մեկնեցին ոչ միայն գթասրտությունից դրդված, ոչ միայն մարդկային համերաշխության օրենքներով, այլ նաեւ ելնելով ինքնապաշտպանությունից եւ հոգեկան դաշինքի կարիք զգալով՝ մարդկության գլխին կախված ամեն տեսակի ընդհանուր աղետների դեմ:

Որպեսզի աշխարհի որեւէ ավերված անկյունում փոքրիկ Նարեկը երկու ձեռքով չբռնի գլուխը ու տնքա.

- Վայ-վա՛յ, տատի...

Որպեսզի իմ թոռնիկ Հասմիկի նման որեւէ մանուկ սարսափած կուչ չգա տան մի անկյունում ու մրմնջա.

- Թաքնվել եմ, որ երկրաշարժն ինձ չգտնի...

Արտաշես ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ